

Հասմիկ Զ. Հակոբյան
Երևանի Պետական համալսարան
hasmikhakobyan1@gmail.com
ORCID: 0009-0007-2616-6761

**ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ԻՆՏԵՐՏԵՔՍՏԻ ԴԻՍԿՈՒՐՍԱՅԻՆ
ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ՎԱԽՃԱՆԱԲԱՆԱԿԱՆ
ՇՐՋՈՒՄԸ ԱՐԴԻ ՀԱՅ ԱՐՁԱԿՈՒՄ**
(Արփի Ոսկանյանի «Չի վաճառվում» ժողովածուի օրինակով)

Ամփոփում

Արդի հայ արձակույթում աստվածաշնչյան ինտերտեքստը՝ որպես արժեքային ճգնաժամի արտահայտության ձև և մշակութային հիշողության կրող, բավականին կենսունակ է և դրսևորվում է աստվածաշնչյան կերպարների և նարատիվների դեկոնստրուկցիայի միջոցով: Գրականագիտական ուսումնասիրություններում աստվածաշնչյան ինտերտեքստի այս գործառույթը սերտորեն առնչվում է վախճանաբանական մտածողությանը՝ էսխատոլոգիային (անգլ. eschatology), քանի որ վերջինս հնարավորություն է տալիս անդադառնալու ոչ միայն պատմության կամ աշխարհի վերջի գաղափարին, այլև իմաստային համակարգերի քայքայմանը, հավատքի ճգնաժամին և արժեհամակարգային փոփոխություններին: Այդ իմաստով վախճանաբանությունը արդի գրականության մեջ դադարում է զուտ դոգմատիկ կամ աստվածաբանական հասկացություն լինելուց. այն վերածվում է տեքստային մետաֆորիկ գործիքի, որի միջոցով արտահայտվում են ժամանակակից աշխարհի և մարդու արժեհամակարգային փոփոխությունները:

Այս առումով ուշագրավ է Արփի Ոսկանյանի արձակը, որում աստվածաշնչյան ինտերտեքստը մշակութային նարատիվի կրողն է, որը ենթարկվում է քննության, խեղաթյուրման, երբեմն՝ ծաղրական վե-

րարժևորման: Աստվածաշունչը ոչ թե սրբագան հեղինակություն է, այլ կոլեկտիվ հիշողության կաղապար, որի միջոցով ցուցադրվում են ժամանակակից կյանքում առկա փոփոխություններն ու աղավաղումները:

Բանալի բառեր– Արփի Ոսկանյան, աստվածաշնչյան ինտերտեքստ, էսխատոլոգիա, վախճանաբանական շրջում, դիսկուրս, արժեքային ճգնաժամ, ապոկրիֆ, արդի հայ արձակ:

Hasmik J. Hakobyan

THE DISCURSIVE FUNCTIONS OF BIBLICAL INTERTEXT AND THE ESCHATOLOGICAL TURN IN CONTEMPORARY ARMENIAN PROSE

(A Case Study of Arpi Voskanyan’s Not for Sale Collection)

Abstract

In contemporary Armenian prose, biblical intertext functions as a vital mode of expressing the value crisis and as a carrier of cultural memory, manifesting itself through the deconstruction of biblical characters and narratives. In literary studies, this function of biblical intertext is closely connected with eschatological thinking (eschatology), as it enables reflection not only on the idea of the end of the world or of history, but also on the collapse of meaning systems, the crisis of faith, and transformations in value structures. In this sense, eschatology in contemporary literature ceases to be a purely dogmatic or theological concept and is transformed into a textual and metaphorical tool through which shifts in the value systems of the modern world and the modern individual are articulated.

From this perspective, the prose of Arpi Voskanyan is particularly noteworthy, as biblical intertext appears there as a bearer of a cultural narrative that is subjected to critique, distortion, and at times ironic or parodic re-evaluation. The Bible thus functions not as a sacred authority, but as a framework of collective memory through which the changes and distortions present in contemporary life are revealed.

Key words - Arpi Voskanyan, biblical intertext, eschatology, eschatological turn, discourse, value crisis, apocrypha, contemporary Armenian prose.

ДИСКУРСИВНЫЕ ФУНКЦИИ БИБЛЕЙСКОГО ИНТЕРТЕКСТА И ЭСХАТОЛОГИЧЕСКИЕ ПОВОРОТЫ В СОВРЕМЕННОЙ АРМЯНСКОЙ ПРОЗЕ

(На примере сборника рассказов Арпи Восканян «Не продается»)

Резюме

В современной армянской прозе библейский интертекст выступает важной формой выражения ценностного кризиса и является носителем культурной памяти через деконструкцию библейских персонажей и нарративов. В литературоведческих исследованиях функция библейского интертекста тесно связана с эсхатологическим мышлением (eschatology), т.к. позволяет размышлять не только о конце мира или истории, но и о разрушении смысловых систем, кризисе веры и трансформациях ценностных структур. В этом смысле эсхатология в современной литературе перестает быть исключительно догматической или теологической концепцией и превращается в текстуальный и метафорический инструмент, посредством которого артикулируются изменения ценностных систем современного мира и личности.

С этой точки зрения проза Арпи Восканян представляет особый интерес, т.к. библейский интертекст здесь выступает как носитель культурного нарратива, подвергающегося критике, искажению, а иногда и иронической или пародийной переоценке. Такой подход характерен для постмодернистской интертекстуальности, которую Линда Хатчон (Linda Hutcheon) определяет как «пародийную переработку» (parodic reworking). Таким образом, Библия функционирует не как священный авторитет, а как структура коллективной памяти, через которую демонстрируются изменения и искажения, присутствующие в современной жизни.

Ключевые слова - Арпи Восканян, библейский интертекст, эсхатология, эсхатологический поворот, дискурс, ценностный кризис, апокриф, современная армянская проза.

Մուտք

Վախճանաբանության ուսումնասիրությունը սկսվել է դեռ 19-րդ դարից: Վախճանաբանական գրականության պատմությանը անդրադար-

ձել է Բոկաչինին (Boccaccini 2014): Բոկաչինին, նշելով վախճանաբանական գրականության առաջին ուսումնասիրողներին (Ֆրիդրիխ Լյուկ (Lücke 1832), Յոհան Միքայել Շմիդ (Schmidt 1969) և այլք), նկատում է, որ վախճանաբանական գրականությունը նախնական շրջանում անտեսված և ստորադասված է եղել: Հետագայում այդ վերաբերմունքը հաղթահարվել է, իսկ հետմոդեռնիստական արձակում վախճանաբանական թեման մեծ տեղ է զբաղեցրել՝ շրջված ծառայելով իրականությունը գաղափարապես բացահայտելուն: Հայ իրականության մեջ վախճանաբանության ժանրային ընկալումներին ընդգրկուն կերպով անդրադարձել է միջնադարագետ Էսթեր Պետրոսյանը (Պետրոսյան 2025):

1. Ուսումնասիրության տեսական հիմքը. վախճանաբանական շրջում և ապոկրիֆ

Սույն ուսումնասիրության նպատակը Արփի Ոսկանյանի «Չի վաճառվում» պատմվածքների ժողովածուում աստվածաշնչյան ինտերտեքստի դրսևորումների և դրանց գործառույթների գրականագիտական քննությունն է՝ Ֆրանկ Քերմոդի ձևակերպած վախճանաբանական շրջման (the eschatological turn) տեսության և Ալեքսեյ Տատարինովի առաջարկած «ապոկրիֆի իշխանության» տրամաբանությամբ: Ուսումնասիրությունը Արփի Ոսկանյանի «Երկրորդ գալուստը», «Մինչև արդարի կանչելը», «Ողջերին թող թողեն ողջերը», «Բամբասանքն էր ի սկզբանե» պատմվածքների շրջանակներում է:

Վերոնշյալ պատմվածքներում հաճախադեպ են վախճանաբանական շրջման օրինակները: Վախճանաբանությունը՝ էսխատոլոգիան (հուն. eschatos – «վերջին»), աստվածաբանական ուսմունք է աշխարհի վերջի, դատաստանի, երկրորդ գալուստյան, փրկության և հավիտենական կարգի մասին: Վախճանաբանական շրջման դեպքում պահվում են էսխատոլոգիայի լեզուն ու պատկերները, բայց փոխվում է դրանց իմաստային վեկտորը: Վախճանաբանական շրջումը կենտրոնական մոտիվ է թե՛ Ենովքի 1-ին գրքում, թե՛ Ղուկասի Ավետարանում: Վախճանաբանական շրջում նշանակում է ավանդական վախճանի՝ էսխատոլոգիայի (վերջնախորհրդի) իմաստային հակադարձում կամ խաթարում տեքստում: Այսինքն, եթե ավանդական քրիստոնեական էսխատոլոգիայում Քրիստոսի երկրորդ գալուստը փրկություն է ընկալվում, դատաստանը՝ արդարների արդարացում, վերջը՝ իմաստի բացահայտում, որը խոստանում է կարգ, արդարություն և իմաստ, ապա վախճանաբանական շրջումը հակադրում է այս բոլորը: Այսինքն, եթե ավանդական էսխատոլոգիայում արդարացումը կարգի և իմաստի հավանական շրջանակներում է, ապա վախճանաբանական շրջումը հակադրում է այս բոլորը: Այսինքն, եթե ավանդական էսխատոլոգիայում արդարացումը կարգի և իմաստի հավանական շրջանակներում է, ապա վախճանաբանական շրջումը հակադրում է այս բոլորը: Այսինքն, եթե ավանդական էսխատոլոգիայում արդարացումը կարգի և իմաստի հավանական շրջանակներում է, ապա վախճանաբանական շրջումը հակադրում է այս բոլորը:

ճանաբանական շրջման առումով Քրիստոսի գալուստը դառնում է սպառնալիք, դատաստանը՝ բռնություն, վերջը՝ քաոս, որն այլևս չի փրկում, այլ մերկացնում է աշխարհի քայքայված վիճակը:

Բրիտանացի տեսաբան Ֆրանկ Քերմոդն իր ուսումնասիրության մեջ ցույց է տալիս, որ սկիզբն ու ավարտը երևակայական հասկացություններ են, որոնք մարդը ստեղծում է, որպեսզի «մեջտեղում ապրելու» («living in the middle») իր վիճակը տանելի դարձնի: Քերմոդը գրում է. «Մենք մեզ՝ որպես ժամանակի փոքր ու խոնարհ միավոր, նախագծում ենք սկիզբների և ավարտների հետ մի երևակայական համաձայնության մեջ, որն էլ իմաստ է հաղորդում մարդկային կյանքերին և գրական ստեղծագործություններին» (Kermode, 2000, p. 7): Գրականությունը, շրջելով էսխատոլոգիան, ցույց է տալիս, որ ավանդաբար ընդունված ու հայտնի երևակայական հասկացությունները կարող են նաև ձախողվել կամ խեղաթյուրվել: Սա հիմնականում կատարվում է հայտնության՝ ապոկալիպսիսի նկարագրության միջոցով: Խոսելով ժամանակակից գրականության մեջ ապոկալիպսիսը հեղինակագրկելու մասին՝ Քերմոդը գրում է. «Ապոկալիպսիսը այն չէ, ինչին կարելի է պարզապես հավատալ կամ չհավատալ. այն մտածողության ձև է անցյալի, ներկայի և ապագայի փոխհարաբերության մասին» (Kermode, 2000, p. 8): Այսինքն՝ ապոկալիպսիսը ոչ թե հավատքի հարց է, այլ ժամանակի իմաստավորման ձև, ուստի, երբ գրական տեքստը այդ լեզուն օգտագործում է քաոս, բռնություն կամ դատարկություն պատկերելու համար, մենք գործ ունենք վախճանաբանական շրջման, ոչ թե «կրոնական սխալի» հետ:

Վախճանաբանական շրջման սկզբունքով կառուցված գրական տեքստերում հաճախադեպ են նաև ապոկրիֆները: Ապոկրիֆները (հին հունարեն ἀποκρυφός՝ գաղտնի) Սուրբ Գրոցը հավասար հեղինակության հավակնող, սակայն Աստվածաշնչի կանոններից դուրս մնացած, այսպես ասած, պարականոն ստեղծագործություններ են: Գրականության մեջ ապոկրիֆը նաև միջտեքստային ռազմավարություն է, որի միջոցով սրբազան նարատիվը վերապատմվում է պատմական, սոցիալական կամ պատմական նոր համատեքստում, ըստ այդմ՝ սրբազան տեքստ է ներմուծվում հեղինակային սուբյեկտիվությունը: Ըստ Ալեքսեյ Տատարինովի՝ ապոկրիֆը սրբազան նարատիվի ոչ կանոնական, ինտերտեքստուալ վերապատմումն է, որը ժամանակակից գրական դիսկուրսում մեկնաբանական, բազմաձայն և սուբյեկտիվ խոսքի տարածք է: Հատկանշական է, որ Տատարինովը շեշտում է ապոկրիֆի և կանոնի

ոչ թե հակադրվող, այլ երկխոսային հարաբերությունը, որի միջակայքում էլ ծնվում է ժամանակակից գրական դիսկուրսը: Տատարինովի մոտ ապոկրիֆի առանցքային հատկանիշներից է սրբազանի մարդկայնացումը. աստվածաշնչյան կերպարները ստանում են հոգեբանական խորություն, առաջ են գալիս կասկածներ, վախեր, սխալներ, ներքին հակասություն, ինչի արդյունքում սրբազան պատմությունը դառնում է էքզիստենցիալ փորձառություն:

2. Վախճանաբանական շրջման իմաստաստեղծ գործառույթը «Երկրորդ գալուստը» պատմվածքում

Վախճանաբանական շրջման ցայտուն օրինակ է «**Երկրորդ գալուստը**» պատմվածքը՝ պարատեքստային վերնագրով: Այն միջտեքստային մեջբերումների խճանկար է, որտեղ «Հիսուսը գալիս է» կրկնվող արտահայտությունը ոչ թե փրկության, այլ խուճապի, բռնության և հիստերիայի ազդակ է: Այստեղ գործ ունենք *այյուզիայի* հետ. Հեղինակն անուղղակի մեջբերումներ չի անում Աստվածաշնչից. ընթերցողը բովանդակային պլանում ճանաչում է նախատեքստը՝ առանց դրա անմիջական առկայության: Վերնագիրը ապոկրիֆային նշան է. այն խոստանում է սրբազան իրադարձություն, բայց տեքստում իրականացնում է հակառակ գործառույթը: Ալեքսեյ Տատարինովի տեսության համաձայն՝ ապոկրիֆը սրբազան պատմության ոչ կանոնական, սուբյեկտիվ և մեկնաբանական շարունակությունն է: «Երկրորդ գալուստը» հենց այս տրամաբանությամբ է կառուցված: Հեղինակը տեքստը կառուցել է գլխավորապես երևակայական պատկերների, ցնորքների, իրականի և անիրականի համադրության միջոցով՝ ներկայացնելով Հիսուսի երկրորդ գալստյան օրը մի աղջկա հայացքով, որը սեր է փնտրում:

Քրիստոնեական աշխարհը հաճախ է խոսում Հիսուսի երկրորդ գալստյան մասին, շատ հավատացյալներ են սպասում դրան՝ որպես երկիրը մաքրագործող, չարն ու բարին ըստ արժանվույն դասակարգող ու գնահատող մի իրողության: Աստվածաշնչում Հիսուս Քրիստոսի երկրորդ գալուստի մասին խոսվում է գրեթե 2500 անգամ, որը փրկչի հետ հանդիպման խորհուրդն ունի, իսկ ավելի լայն իմաստով այն փիլիսոփայական մետաֆորի նշանակություն է ձեռք բերում՝ թույլ տալով խոսել աշխարհում և հասարակության մեջ մարդու տեղի, կենսապայմաններով թելադրված բարոյական ընտրության արդյունքում ստեղծված իրավիճակի, ազատության և դավաճանության մասին: Հետևաբար, Աստվածաշնչյան

ցանկացած նախատեքստ, որը ներկայացված է գիտակցված շեղումներով ու փոփոխություններով, մղում են մշակութային և էքսպլիստենցիալ իմաստների խորքերի քննության:

Պատմվածքի առաջին հատվածում ստեղծվում է աշխարհ, որտեղ բոլորը սպասում են փրկարար Գալուստին: Սպասողների նկարագրությունը խորհդանշական է. «Նրանց սքեմների վրա կեղտագույն խաչեր էին դաշված, իսկ սքեմների տակ էլի սքեմներ կային» (Ոսկանյան, 2016, էջ 5): Խաչի բազմապատկված լինելը, գույնի սիմվոլացումը, սքեմի շերտավորվածությունը հավատքի ընկալման չափազանցվածության և միևնույն ժամանակ դրա ապականման նշաններ են: Մարդիկ չեն ապրում հավատը, այլ կրում են այն: Նրանց հայացքները «ապակե աչքերում թաքցրած ատելության» պես են բնութագրվում: Ապակին այստեղ դատարկության, անզգայության և կեղծ սրբության նշան է: Կեղծ սրբության նշաններ են նաև պատմվածքում կենտրոնական տեղ զբաղեցնող սքեմը և սքեմավորները, որոնք չունեն անհատական դեմքեր, ունեն «ապակե աչքեր», մեխանիկորեն կրկնում են աստվածաշնչյան արտահայտություններ՝ «շտապել է պետք...», «ուշացածները կմնան դրսում...», «տեքը կտանի իր հարսներին...»: Այս կրկնությունները ցույց են տալիս, որ սրբազանը վերածվել է սոցիալական կարգապահության և հասարակությանը վերահսկելու գործիքի: Սքեմավորներին հակադրվում է կնոջ մերկությունը. «Հանկարծ նկատեցի, որ մերկ եմ, բոլորովին մերկ» (Ոսկանյան, 2016, էջ 6): Մերկությունն անպաշտպան ճշմարտության խորհրդանիշ է, ազատության հոգեվիճակ, որն արժանանում է համընդհանուր նախատինքի: Հերոսուհու մերկությունը հղում է ծննդոցին (նախամարդկանց՝ Ադամին ու Եվային), սակայն այստեղ մեղքի աղբյուրը ոչ թե մարմինն է, այլ մարմինն ուղղված հայացքը:

Օրվա՝ հետմոդեռնիստական արձակին բնորոշ քառասյին նկարագրությունները վերաճում են ֆանտաստիկ դրվագների: Որպես հիմնական և անօտարելի տարրեր՝ առկա են անիրական աշխարհի նկարագրություններ, կերպարներ և օբյեկտներ, որոնց հետ փոխհարաբերվում են հերոսն ու ընթերցողը: Աստվածաշնչյան նախատեքստով այսօրինակ գործերը ռուս գրականագետ Տատյանա Խորուժենկոն անվանում է Աստվածաշնչյան ֆանտաստիկա, որի մասին «Երկրորդ գալստյան մոտիվը ժամանակակից ռուսական ֆանտաստիկ ժանրում» հոդվածում ասում է, որ ռուս և համաշխարհային գրականության մեջ բավականին կենսունակ է Հիսուսի երկրորդ գալստյան մոտիվը, քանի որ հեղինակներին գերում է Քրիստոսի կերպարը՝ որպես բացառիկ կատարելության, հոգևոր ու բա-

րոյական արժեքների կրող: Որպես համապատասխան օրինակներ՝ Խորուժենկոն քննում է ռուս ժամանակակից գրականության հետևյալ ստեղծագործությունները՝ Ս. Լուկյանենկոյի «Երկինք որոնողները» (1997, 1999–2000), Վ. Խլումովի «Ծեր Կույս Մարիամը» (1997), Ն. Պերումովի «Մեղքի քրոնիկոն» (2006), Ե. Վոզնեսենկայայի «Լանսելոտի արկածները» (2003): Նա միևնույն ժամանակ նշում է, որ այս մոտիվն ու նախատեքստը կիրարկելի են ֆանտաստիկայի ժանրում, որն ընդունված է անվանել Աստվածաշնչյան ֆանտաստիկա (Хоруженко 2017): Հիսուսի երկրորդ գալստյան մոտիվը կենսունակ է նաև ֆիլմերում (Ալեքսեյ Ուլխտելա «Երկիր»):

Եթե Ս. Խորուժենկոյի բերած օրինակներում հերոսները պայքարի մեջ են մտնում սատանայական ուժերի հետ, երբեմն ստանում են Աստվածաշնչյան կերպավորումներ (Հիսուս, Մարիամ) և հիմնականում ուղիներ են փնտրում աշխարհը փրկելու համար, ապա Ա. Ոսկանյանի ստեղծագործության մեջ հերոսի փնտրածը սեր է. նրա փնտրտուքը Նրան, սիրելիին՝ որպես ապրելու խարիսխ, գտնելու համար է: «Զգացի, որ այսքան ժամանակ քեզ էի որոնում»: Սա երկրորդ գալուստի ակնկալիքի անձնական տարբերակն է: Բայց հաջորդում է շրջումը. «Չնկատեցի քո սև սքեմը և չտեսա աչքերիդ ապակին...»: Նա՛ սիրելին, արտաքնապես նման է Քրիստոսին, բայց ունի նաև ապակե աչքեր, սքեմ, բռնություն, սատանայական բնույթ: Սա, ըստ էության, ապոկրիֆիկ Քրիստոս է. կրում է նույն սքեմը, նույն ապակին, ինչ ամբոխը: Նրա խոսքը բացահայտում է, որ իր նկատմամբ նախնական վերաբերմունքը սխալմունք է. «Ների՛ր, չեմ կարող... Հիսուսը գալիս է»: Սիրո փոխարեն ընտրելով սպասվող, բայց դեռ ոչ իրական գալուստը՝ հերոսը ցույց է տալիս իրականի և երևակայականի նկատմամբ մարդկային վերաբերմունքը: Պատումային հյուսվածքը խճճվելով ի վերջո հանգում է քաղաքական ենթատեքստի. «Դու սասցիր, որ մինչև չծնվես, Հիսուսը չի գա: Ես իսկույն հասկացա, որ սա ծուղակ է, որ դու ամենևին էլ դու չես, այլ սատանան: Բայց չհասկացա, թե ես ինչ կապ ունեմ այդ քաղաքական պայքարի հետ» (Ոսկանյան, 2016, էջ 12): Պատմվածքում բացահայտորեն ներմուծվում են Հովհաննեսի Հայտնության պատկերները՝ մեծ պոռնիկը, գազանը, թագավորները, դատաստանը: Սակայն այստեղ դրանք հայտնվում են հանդիսավորված, գրոտեսկային, սեռականացած միջավայրում: Հայտնության գրքի սյուժեն ներխուժում է նաև առօրյա կյանք. «մի կիսամերկ կին էր նստած... Մատանուց ճանաչեցի՛ խորթ մայրս էր»: Սրբազան տեքստը վերածվում է անձնական տրավմայի պատմության: Շարունակվող քառուր ներխուժում է եկեղեցի, որտեղ հանդիպում ենք սատանային. «սատանան էր՝ մի սովորական, գի-

րուկ մարդ, որը մոտ էր վաճառում»: Սա ապոկրիֆի ևս մեկ դրսևորում է. չարը չի թաքնվում, այլ օրինականորեն գործում է սրբավայրում: Ապոկալիպսիսը չի մաքրում աշխարհը, սուկ բացահայտում է դրա նողկալի, ճահճացած վիճակը: Սրբեմավոր ամբոխը ցույց է տալիս կեղծ հավատացյալների պատկերը. նրանք հիշեցնում են Ավետարանի փարիսեցիներին, որոնք կրում են խաչեր, բայց զուրկ են կարեկցանքից, մարմնավորում են կրոնական ֆորմալիզմը: Խաչը դառնում է ոչ թե փրկության, այլ նշանակման և օտարման նշան:

Պատմվածքն ավարտվում է վերելքով, սակայն առանց երկրորդ գալուստի. «Ես սլացա՝ վերև՝, վերև՝ ու էլ ավելի վերև՝...» (Ոսկանյան, 2016, էջ 17): Այս փախուստն ուղեկցվում է սիրո աղոթքով. «Բոլոր տաներն ու բառերը ջնջվեցին...

– Ես սիրում եմ քեզ... Ես սիրում եմ քեզ...» (Ոսկանյան, 2016, էջ 17):

Վերջաբանը՝ կնոջ թռիչքը վերև, խորհրդանշում է նրա փրկությունը, սակայն նա չի փրկվում եկեղեցու, «Կենաց Գրքի» կամ Քրիստոսի միջոցով: Նրան փրկում է սիրելու ունակությունը: Վերջին կրկնվող նախադասությունը՝ «Ես սիրում եմ քեզ...», դառնում է այլընտրանքային Ավետարանի ու աղոթք: Սա է ապոկրիֆի էությունը. սրբազան պատմության փոխարեն առաջարկվում է մարդկային, սուբյեկտիվ, սիրո վրա հիմնված նարատիվ: Պատմվածքի ավարտը չունի ընդունված իմաստաստեղծ փրկարար գործառույթը, որի մասին նշում է նաև Քերմոդը. «Ավարտները ոչ թե բնական են, այլ հորինված, և ժամանակակից գրականության մեջ դրանք հաճախ դիտավորյալ կերպով ձախողվում են» (Kermode, 2000, p. 45): Ավարտի պատկերն առկա է, սակայն այլևս չկա փրկության հավատը: Մենք գործ ունենք արմատական վախճանաբանական շրջման հետ. ավետարանական մեծ իրադարձությունը՝ Քրիստոսի երկրորդ գալուստը, ձախողվում է ոչ թե համաշխարհային չարի կամ պատմական աղետի պատճառով, հանուն մի աղջկա սիրելու ցանկության: Սա Քերմոդի նկարագրած «վերջի մասնավորեցումն» է. վերջը ոչ թե պատմությանն է, այլ մարմնինը:

3. «Մինչև արաղաղի կանչելը» պատմվածքը՝ ժամանակակից քաղաքական–աստվածաբանական ապոկրիֆ

Պետրոսի ուրացման դրվագից բացահայտ ինտերտեքստ է «Մինչև արաղաղի կանչելը» պատմվածքի վերնագիրը. այն ուղղակի

հղում է Ավետարանին (Մատթ. 26:34), որտեղ աքաղաղի կանչը նշան է Պետրոսի ուրացումը բացահայտելու, զղջալու և ճշմարտությունը բացահայտելու համար: Այստեղ ուրացման էսխատոլոգիան զուգորդվում է մեղքի ապահերոսացման հետ. ուրացումը ոչ թե անհատական մեղք է, այլ կոլեկտիվ գոյաբանական վիճակ: Վախճանաբանական շրջման դրսևորում է աքաղաղի կանչը, որն Ավետարանում ճշմարտությունը բացահայտելու պահն է, մինչդեռ Ա. Ոսկանյանի մոտ այդ պահը զղջում կամ փոխակերպում չի բերում, դառնում է դատարկության նշան: Իմա՝ վերջի «արթնացման» խոստումը չի իրագործվում: Ժենետի տեսանկյունից սա հիպերտեքստի դեֆորմացիա է, հին պատմությունը կա, բայց չի ընթանում նույն կերպ (Genette 1997): Այս պատմվածքը ցույց է տալիս, որ ժամանակակից սուբյեկտը ապրում է մշտական ուրացման մեջ՝ առանց փրկության ակնկալիքի:

Պատմվածքի սյուժեն կառուցված է ժամանակակից կյանքից վերցված մի դրվագի շուրջ, որի նկարագրությունը գլխավոր հերոսուհու մտապատկերում կատարվող զուգորդումների միջոցով ընթերցողին աստվածաշնչյան համատեքստ է ուղղորդում: Տեղի է ունենում դատաստան, սակայն այն ոչ թե իրավական կամ աստվածային է, այլ իշխանական է, որը հանդիսավոր բնույթ է ստանում: Հերոսուհին բերվում է նախագահի նստավայր, որտեղ նրան դատաստան էր սպասվում: Պատմվածքում աստվածաբանական դատաստանի տեղը զբաղեցնում է իշխանության եռյակը՝ նախագահ – դատախազ – կաթողիկոս: Հատկապես կարևոր է կաթողիկոսի կերպարը՝ անվանափոխված որպես «ամենայն հայոց ավագակապետ»: Հաթչոնը սա պարողիկ ապարքազանացում է անվանում (Hutcheon, 1988): Այսպիսով հեղինակն ակնարկում է այն փաստը, որ կրոնական ինստիտուտը այլևս չի միջնորդում ճշմարտության և մեղքի միջև: Նախագահի նստավայրում հերոսուհին ոչ թե դատապարտվում է, այլ խեղաթյուրված հերոսացման միջոցով ոչնչացվում է: Պարզևատրվում է Վասակ Սյունու շքանշանով: Շքանշանի ընտրությունը խորհրդանշական է. «Վասակ Սյունո՞ւ՝ հայտնի դավաճանի՞» (Ոսկանյան, 2016, էջ 187): Այստեղ պատմական ինտերտեքստը միանում է ավետարանականին. դավաճանությունը վերածվում է պետական առաքինության. պատմական կերպարը օգտագործվում է արժեքների հարաբերականությունը բացահայտելու համար: Ի վերջո հերոսուհին, որին մեղադրում էին դավաճանության մեջ, դավաճանում է սեփական սկզբունքների: «Ինչ էլ որ խոստովանելու կամ հերքելու լինեի, լինելու էր իմ դատավճիռը» (Ոսկանյան, 2016, էջ 186):

Սա դասական էսխատոլոգիայի հակադարձումն է. մեղքի խոստովանությունը փրկություն չի բերում, լուրջությունն էլ չի փրկում պատժից: Եթե Ավետարանում Պետրոսը ուրանում է Քրիստոսին, այստեղ հերոսուհին ստիպված է ուրանալու ինքն իրեն: Նա ոչ թե բացահայտ է ուրանում, այլ լռելով, չհակաձառելով, չհերքելով, չձգբրտելով խեղաթյուրված փաստերը: «Չհակաձառեցի, չնայած այդպես չէր»: Սա ոչ բացահայտ դավաճանություն է, քաղաքական ենթատեքստ ունեցող բարոյալքում: Տատարինովի «ապոկրիֆի իշխանության» տեսանկյունից սա գրական ապոկրիֆ է, որտեղ ուրացումը այլևս մեղք չէ Աստծո առաջ, այլ քաղաքական գոյատևման մեխանիզմ: Մյուս դավաճանությունն ընկերուհու ենթադրելի մատնությունն է. «Ընկերուհիս էր մատնել ինձ» (Ոսկանյան, 2016, էջ 191): Սա Պետրոսի ուրացման փոխադարձ մոդելն է. ոչ թե աշակերտն է ուրանում Ուսուցչին, այլ մերձավորը մատնում է մերձավորին: Բայց նույնիսկ այս բացահայտումը չի վերածվում փրկության կամ մաքրագործման:

Պատմվածքի ավարտը վերնագրի ազդարարած ենթատեքստի էսխատոլոգիական ձախողում է. վերջում հնչում է վճռական նախադասությունը. «Նույնիսկ արադաղը չկանչեց»: Սա տեքստի գաղափարական հանգույցն է. ուրացումը՝ դավաճանությունը, իրականացել է, սակայն բացահայտման պահը չի գալիս:

Այսպիսով՝ «Մինչև արադաղի կանչելը» պատմվածքում Արփի Ոսկանյանը ստեղծում է ժամանակակից քաղաքական-աստվածաբանական ապոկրիֆ, որտեղ ավետարանական ուրացման սյուժեն վերաշարադրվում է իշխանության, դավաճանության և խեղաթյուրված հերոսացման համատեքստում: Աքադաղի կանչի բացակայությունը խորհրդանշում է վախճանաբանական շրջումը. ուրացումը տեղի է ունենում, բայց գղջման և ճշմարտության պահը երբեք չի գալիս: Դատաստանը փոխարինվում է իշխանության կազմակերպած թատերական «ներկայացմամբ», իսկ փրկությունը՝ նվաստացմամբ:

4. Միջտեքստային խաղարկումների իմաստաստեղծ գործառույթը

«Ողջերին թող թաղեն ողջերը» պատմվածքի վերնագիրը միջտեքստային շրջված, հակադարձ մեջբերում է Ավետարանից. «Եւ Յիսուսը նորան ասեց. Դու իմ ետեւից եկ, եւ թող *մեռելները թաղեն իրանց մեռելներին*» (Մատթ. 8:22): Այս կոչը նշանակում է, որ նրանք, ովքեր չեն հետ-

ևում Քրիստոսին, հոգեպես մեռած են, մինչդեռ կենդանի հավատը պահանջում է թողնել սոցիալական ու կենցաղային պարտավորությունները և հետևել հոգևորին: Ա. Ոսկանյանի դրած վերնագիրը ոչ թե կրկնում, այլ գիտակցաբար շրջում է այս բանաձևը. «Ողջերին թող թաղեն ողջերը»: Միջտեքստային այս փոխարկման արդյունքում խաղարկվում է «մեռած» և «ողջ» հակադրությունը:

Պատմվածքը գրվել է որոշակի ընդմիջումներով՝ 2007–2015 ժամանակահատվածում: Այն սկսվում է ուշագրավ մտորումով. «Հաճախ, իսկ ավելի ստույգ՝ միշտ, գրոհին հետևում է նահանջը, և երբեք՝ հաղթանակը, որովհետև հաղթանակը միշտ քայլում է գրոհի հետ, և գրոհը հենց հաղթանակն է: Բայց գրոհի ու հաղթանակի մեջ գալիս է մի պահ, երբ զգում ենք, որ ողջ ենք ու մեր նախնիների, ծնողների, Աստծո ու բնության առաջ պարտավոր ենք փրկել մեզ» (Ոսկանյան, 2016, էջ 210): Այս մտորումը հիշեցնում է Ֆ. Քերմոդի՝ սկզբի և ավարտի միջև մարդու գոյության գիտակցության մասին վերը քննարկած գաղափարը, որտեղ զոգորդվում են սկիզբ-գրոհ, հաղթանակ-ավարտ հասկացությունները, և ավարտը՝ հաղթանակը, փոխարինվում է նահանջով:

Պատմվածքի սյուժեն, որ կառուցված է հերոսի՝ սոցիալական կայքում գրանցվելու, սոցցանցային անցուդարձի համատեքստում մահացած տատին հիշելու դրվագների շուրջ, աղավաղում է «հոգևոր կյանք» և «հոգևոր մահ» տարբերակումը: «Երևի այս կայքերը ինչ-որ կերպ կապված են մահվան հետ, ինչպես տատս էր կապված մահվանը» (Ոսկանյան, 2016, էջ 215):

Համակարգչի էկրանից այն կողմ ծանոթ-անծանոթ ընկերներն են, իսկ մտքում՝ պատմվածքի առանցքային միտքը. «Ողջերին թող թաղեն ողջերը»: Աչքի առաջ տատի վերջին հրաժեշտն է ու կիսաբաց դագաղից երևացող վերջին ժպիտը. «Այդ ժպիտը ասում էր՝ կա միայն մահ, մենք բոլորս մեռած ենք, վաղուց կատարված է մեր մահը, մենք տարբերվում ենք միայն մեռածության աստիճանով» (Ոսկանյան, 2016, էջ 220): Պատմվածքը, որ կառուցված է սոցհարթակ-անդրաշխարհ, կյանք-մահ, ստատուսներ-տապանագրեր գուգորդումներով, ավարտվում է սոցհարթակում տատին՝ որպես ընկեր, գտնելու հույսով, որտեղ նրանց սոցիալական դերերը կսահմանափակվեն միայն ընկերական հարաբերությամբ: Այստեղ գործ ունենք ինվերսիվ ռեմինիսցենցիայի հետ, երբ աստվածաշնչյան խոսքի կաղապարը պահպանվում է, բայց նրա արժեքային առանցքը շրջվում է:

«Բամբասանքն էր ի սկզբանե» պատմվածքի վերնագիրը միջ-տեքստային խաղարկում է՝ Հովհաննեսի Ավետարանի հիմնարար նախա-դասությունը՝ «Ի սկզբանե էր Բանը»: Եթե Ժ. Ժենետի տեսանկյունից մեկ-նաբանենք, ապա սա պարատեքստային հակադարձում է: Այն հուշում է խոսքի նահանջը՝ դեգրադացիան և ապոկալիպսիսը: Եթե ավանդաբար Բանը՝ խոսքը, կարգ է, ձձմարտություն, աստվածային ներկայություն, ա-պա այստեղ այն փոխարինվում է բամբասանքով՝ կեղծ, աղավաղված ու քայքայված խոսքով:

Պատմվածքի առաջին հատվածում բամբասանքը ներկայացվում է գրական միջավայրում՝ գրողների հանգստյան տան տարածքում: Այն նկարագրվում է ոչ իբրև պատահական արատ, այլ կոլեկտիվ լեզվական գոյության ձև. «Բոլոր արատներից գրողների համար ամենասիրելին բամբասկոտությունն է» (Ոսկանյան, 2016, էջ 250): Բամբասանքն այստեղ համատարած է, անխուսափելի, և, որ ամենակարևորն է, ինքնավար. այն գործում է անկախ բարոյական դատողությունից: Սա, ըստ Կրիստեայի, լեզվի այն վիճակն է, երբ խոսքը այլևս չի ծառայում ձձմարտության փո-խանցմանը, այլ միայն ինքնանպատակ է շրջանառվում: Պատմվածքում եկեղեցին դառնում է ապոկրիֆի տարածք: Առանցքային շրջումը տեղի է ունենում, երբ պատմողը մտնում է եկեղեցի՝ ակնկալելով լռություն, կարգ, սրբություն. «Եկեղեցում կատարյալ հանգստություն էր ու լռություն, որ Աստված նվիրում էր ինձ» (Ոսկանյան, 2016, էջ 253): Սակայն այդ լռությունը կեղծ է: Շուտով բացահայտվում է, որ խորանից հնչող ձայները ոչ թե հրեշտակային են, այլ՝ բամբասանք. «Իս մի ձայն չէր, այլ մի քանի ձայն՝ իրար խառնված» (Ոսկանյան, 2016, էջ 253): Սկզբում թվում է, թե հնչողը հրեշտակների փսփսոց է, սակայն շուտով պարզվում է, որ խոսքը կաթողիկոսի ապօրինի որդու մասին է: Երբ պարզվում է բամբասանքի բնույթը, կարևորվում է նաև դրա աղբյուրը. «բամբասանքը ճիշտ Հիսուսի պատկերից էր բխում» (Ոսկանյան, 2016, էջ 254): Սա ուժգին ապոկրիֆա-յին դրսևորում է. սրբապատկերը մնում է տեղում, բայց նրանից բխածը աստվածային խոսք չէ: Հատուկ ուշադրության արժանի է Քրիստոսի կեր-պարի փոխակերպումը, որը դրսևորվում է Հիսուսի դեմքի նկարագրույ-թյամբ. «դրանից նրա դեմքի արտահայտությունը չէր փոխվում՝ ոչ հանդի-մանանք, ոչ տխրություն... Ու եթե ինչ-որ արտահայտություն էլ կար Հի-սուսի դեմքին, ապա միայն հետաքրքրված ու մի քիչ չարածձի, ինչպիսին ունենում են բամբասողների դեմքերը» (Ոսկանյան, 2016, էջ 254): Սա չա-փազանց կարևոր դրվագ է. Քրիստոսը չի դատում, չի ընդվզում, չի մեր-ժում բամբասանքը: Կերպարային այս դեկոնստրուկցիան համապատաս-

խանում է էսխատոլոգիայի չեղարկմանը. դատաստանի սուբյեկտը բացակայում է: Ավետարանական Քրիստոսը վերջում պիտի դատի աշխարհը, իսկ այստեղ նա կարծես մասնակից է խոսքի քայքայմանը: Պատմվածքի հաջորդ խորքային շրջումը տեղի է ունենում վերջում, երբ պատմողը հարցադրում է անում խոստովանության և հայտնության էության մասին. «Եվ ի՞նչ է խոստովանությունը, եթե ոչ այլասերության հասցված բամբասանք: Եվ ի՞նչ է հայտնությունը»: Այս հարցերը ավանդական պատասխան չեն ստանում: Դրա փոխարեն առաջարկվում է ցնցող վերածակերպում. «Իսկ միգուցե բամբասանքն Աստծո՞ւց էլ հին է: Միգուցե ի սկզբանե բանը չի եղել, այլ բամբասանքը» (Ոսկանյան, 2016, էջ 255): Հոգևոր այնպիսի կարևոր հասկացություններ, ինչպիսիք են խոստովանությունը, հայտնությունը, աստվածային հաղորդակցությունը, միավորվում են մեկ դաշտում՝ բամբասանքի դաշտում: Սա ամբողջական վախճանաբանական շրջում է. վերջին ճշմարտությունը այլևս չի բացահայտվում, այլ շրջանառվում է իբրև կասկածելի խոսք:

Պատմվածքը չի ավարտվում որևէ մաքրագործմամբ կամ լուսավորմամբ: Փոխարենը հնչում է մետակասկած. «Միգուցե ի սկզբանե բանը չի եղել, այլ բամբասանքը»:

Այսպիսով՝ միջտեքստային խաղարկումների, շրջումների միջոցով հեղինակը ստեղծում է ժամանակակից գրական ապոկրիֆ, որտեղ ավետարանական Խոսքը ենթարկվում է վախճանաբանական շրջման: Բանը՝ որպես ճշմարտության և կարգի սկզբունք, փոխարինվում է բամբասանքով՝ որպես մարդկային աղավաղված խոսք: Ի վերջո Քրիստոսի կերպարը զրկվում է արդարադատ և փրկարար գործառույթից, իսկ հայտնությունը դառնում է բամբասանքի բարձրագույն ձև: Այս պատմվածքը բացահայտում է ժամանակակից մարդու գոյությունը մի աշխարհում, որտեղ վերջը չի խոստանում ճշմարտություն: Վերջը կորցնում է ճշմարտությունը բացահայտելու հնարավորությունը նաև այն պատճառով, որ խոսքը՝ լեզուն, ինքնին աղավաղված, քայքայված է:

Եզրակացություններ

1. Վերը ներկայացված ստեղծագործություններում աստվածաշնչյան ինտերտեքստը ոչ թե աստվածաշնչյան նարատիվների կրկնություն է, այլ մշակութային հիշողության ցուցիչ, որը ենթարկվում է քննության, վերաիմաստավորման և երբեմն՝ ծաղրական կամ պառակտող վերարժևորման: Հեղինակը դիտմամբ տեղադրում է

բիբլիական կերպարների և պատմությունների տարրեր ժամանակակից միջավայրում՝ դրանց միջոցով ցույց տալով ժամանակակից կյանքում արժեհամակարգային ճգնաժամն ու հասարակական միջավայրի տեղաշարժերը:

2. Պատմվածքներում առկա վախճանաբանական շրջումները, վերջի՝ ընդունված մոտեցման և աշխարհի կարգի խախտումները ժամանակակից աշխարհի փոփոխվող համակարգում անհատի տեղի և դերի մասին մտորումներ են առաջ բերում՝ ընթերցողին մղելով գոյաբանական մտորումների:
3. Աստվածաշնչյան ինտերտեքստի լեզվական և պատկերային կնախքի պահպանման, բայց և վախճանաբանական շրջման միջոցով խոսույթը դառնում է բազմաշերտ՝ միաժամանակ ընդգրկելով պատմական, սոցիալական, հոգևոր և զգացական շերտեր: Սքեմավոր կերպարները, աղավաղված աստվածային պատկերները և հերոսների անձնական փորձառությունները դառնում են ժամանակակից հասարակության և անհատի արժեքային համակարգերի քննադատության միջոց: Այս բազմաշերտ դիսկուրսային կառուցվածքը հնարավորություն է տալիս ընթերցողին արձագանքելու ինչպես անհատի, այնպես էլ համամարդկային ժամանակակից խնդիրներին:
4. Աստվածաշնչյան սյուժեների խոստումները, ժամանակակից արժեքային ճգնաժամին արձագանքելը ստեղծում են խորհրդանշական միջավայր, որը երբեմն ֆանտաստիկ, ծայրահեղ ու զառանցական է. սա արձագանք է նաև ժամանակակից գրականության հետմոդեռնիստական էսթետիկ ուղղվածության: Աստվածաշնչյան ինտերտեքստի կիրառումը վերածվում է մշակութային նարատիվի, որի միջոցով բացահայտվում է անձի և հասարակության հոգեբանական և բարոյական նկարագիրը:
5. Վախճանաբանական շրջումը ոչ թե մերժում է ընդունված ավանդույթը, այլ ավանդույթին մոտենում է քննադատական տեսանկյունից. աշխարհի վերջի խոստումը բացահայտում է ոչ թե իմաստը, այլ իմաստի բացակայությունը: Քերմոդի ձևակերպմամբ՝ «վերջի պատկերը պահպանվում է, մինչդեռ հավատը վերջի նկատմամբ արդեն կորսված է»:

Հասմիկ Հակոբյան – հեղինակել է 8 գիտական հոդված և 1 մենագրություն: Գիտական հետաքրքրությունները՝ նորագույն շրջանի հայ գրականություն, հետմոդեռնիզմ, միջտեքստայնություն:

Օգտագործված գրականություն

1. **Աստվածաշունչ (2017)**, Աստվածաշունչ մատյան, Հին և Նոր Կտակարանների արևելահայերեն նոր խմբագրություն, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Հայաստանի Աստվածաշնչյան ընկերություն, 2017, 956 էջ:
2. **Ոսկանյան Ա. (2016)**, «Չի վաճառվում», (պատմվածքներ), Երևան, Անտարես, 2016, 336 էջ:
3. **Պետրոսյան Է. (2025)**, «Հայտնութենական ստեղծագործությունների ժանրաբանական և եզրաբանական հարցերը», «ՎԷՄ» համահայկական հանդես, 17 (23), Երևան, 2025, I- XXX:
4. **Boccaccini G. (2014)**, “The Origin and Legacy of the Jewish Apocalyptic Tradition.” In *The Armenian Apocalyptic Tradition: A Comparative Perspective*, edited by Kevork Bardakjian and Sergio La Porta, *Studia in Veteris Testamenti Pseudepigrapha* 25, Leiden, pp. 15–28.
5. **Genette G. (1997)**, *Palimpsests: Literature in the Second Degree*. U of Nebraska Press.
6. **Kermode F. (2000)**, “The Sense of an Ending: Studies in the Theory of Fiction”, Oxford, 1967; 2nd edition, Oxford University Press, 2000.
https://monoskop.org/File:Kermode_Frank_The_Sense_of_an_Ending_2000.pdf
7. **Lücke F. (1832)**, *Versuch einer vollständigen Einleitung in die Offenbarung Johannis und die gesamte apokalyptische Literatur*, Bonn.
8. **Hutcheon L. (1988)**, “The Canadian Postmodern a Study of Contemporary English-Canadian Fiction”, 1988.
9. **Schmidt J. M. (1969)**, *Die jüdische Apokalypitik: Die Geschichte ihrer Erforschung von den Anfängen bis zu den Textfunden von Qumran*, Neukirchen-Vluyn.
10. **Татаринов А. В. (2008)**, *Власть апокрифа: Библейский сюжет и кризисное богословие художественного текста: монография.* – Краснодар, 2008. – 712 с.
11. **Хоруженко Т. (2017)**, //Мотив Второго пришествия в современной русской фэнтези//, *Проблемы исторической поэтики*» выпуск 15, том 2, 2017.
<http://www.intelros.ru/readroom/problemny-istoricheskoy-poetiki/vypusk-15-tom-2-2017/34134-motiv-vtorogo-prishestviya-v-sovremennoy-russkoy-fentezi.html>

Bibliography (Latin Script)

1. **Astvatsashunch’ (2017)**, *Astvatsashunch’ matyan, Hin yev Nor Ktakaranneri arevelahayeren nor khmbagrut’yun, Mayr At’vorr S. Ejmiatsin, Hayastani Astvatsashnch’yan ynkerut’yun*, 2017, 956 ej, **(In Armenian)**.
2. **Voskanyan A. (2016)**, «Ch’i vacharrvum», (patmvtask’ner), Yerevan, Antares, 2016, 336 ej, **(In Armenian)**.

3. **Petrosyan E. (2025)**, «Haytnut'ėnakan steghtsagortsut'yunneri zhanrabanakan yev yezrabanakan harts'ery», «Vem» hamahaykakan handes, 17 (23), Yerevan, 2025, I- XXX, **(In Armenian)**.
4. **Tatarinov A. V. (2008)**, Vlast' apokrifa: Biblejskij sŭžet i krizisnoe bogoslovie hudoŭestvennogo teksta: monografiâ. – Krasnodar, 2008. – 712 s, **(In Russian)**.
5. **Horuženko T. (2017)**, //Motiv Vtorogo prišestviâ v sovremennoj russkoj fėntezi//, Problemy istoričeskoj poėtiki» vypusk 15, tom 2, 2017. <http://www.intelros.ru/readroom/problemy-istoricheskoy-poetiki/vypusk-15-tom-2-2017/34134-motiv-vtorogo-prishestviya-v-sovremennoj-russkoy-fentezi.html> **(In Russian)**.